ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026 թվականի N:213 - Ա ք. Գյումրի

ՄԱՐԻԱՄ ՆՈՒՇԻԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 61-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Մարիամ Նուշիկյանի 2026 թվականի հունիսի 19-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գ.Սարյանի անվան N 24 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարիամ Նուշիկյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 20 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 29-ից մինչև հուլիսի 24-ը ներառյալ:

2. Մարիամ Նուշիկյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գ.Սարյանի անվան N 24 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Արմինե Տեր-Մինասյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է